

Ամերիկայի Արևմտյան թեմէն ներս

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԿՈՂՄԷ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԻՐԱՔԱՎԱՅՈՒԹԵԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական կոչին ընդառաջելով, թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տերսրբեան անմիջապէս հանգանակութեան ձեռնարկեց՝ իրաքահայ մեր ժողովուրդին նիւթապէս օգնելու եւ նորայրական ձեռք երկարելու համար:

Գոհունակութեամբ կը փափաքենք յայտնել թեմիս համայն հաւատացեալներուն, թէ 2003 թուի Դեկտեմբերի վերջը հաւաքուած գումարէն 20,000 (քսան հազար) փութար փոխանցեցինք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հաշտոյն, որպէսզի Վեհափառ Հայրապետը յարմար միջոցներով այդ գումարը հասցնէ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Աւագ արքեպիսկոպոս Ասապուրեանին եւ Թեմական Խորհուրդին, որոնք պիտի գործածուին ժողովուրդի զանազան կարիքներուն համար:

Կ'ուզենք նաեւ յայտնել, թէ Առաջնորդարանէն ներս Իրաքահայերու Օգնութեան հաշիւը փակաին բաց է: Յոյս ունինք թեմիս հաւատացեալներէն յաւելեալ նուիրաբոյութիւններ ստանալ, որպէսզի հաշիւը փակելէ առաջ բոլոր գումարը ամբողջութեամբ փոխանցենք Մայր Աթոռի հաշտոյն:

Այս առթիւ մեր խորին գնահատութիւնը կը յայտնենք այն բոլոր նուիրաբոյներուն, որոնք իրենց նպաստը դրկեցին իրաքահայ մեր ժողովուրդին, որոնք քաղաքական ներկայ կացութեան հետեւանքով կարիքը ունին մեր անմիջական նիւթական օժանդակութեան:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ ԿԱՍՏԱՏՈՒՄ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻ

Թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տերսրբեանի միջնորդութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Աւագ Քահանայութեան Պապի» շնորհեց Արեւմտեան թեմի ութ հոգեւորականներուն:

Աւագ Քահանաներու կոնդակներու պաշտօնական յանձնման համար, առաջնորդ Սրբազան Հայրը Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմնի աջակցութեամբ յարուկ ճաշկերոյթ կազմակերպեց Դեկտ. 12-ին, 2003, Առաջնորդարանի Արշակ եւ Էլիանոր Տիգրանեան համալիրի Գալպճեան սրահին մէջ: Այս ձեռնարկին պատասխանաբար եւ Թեմական Խորհուրդի փոխապետապետ եւ Վեհ Նախի Սուրբ Պետրոս Հայց. եկեղեցոյ հոգեւոր հովիւը Արժ. Տ. Շնորհք քին. Տեմիրճեան:

Բացառիկ այս հանդիսութեան առթիւ Առաջնորդարանի կողմէ փալուած էր յարուկ գրքոյկ մը, որ կը պարունակէր առաջնորդ Սրբազան Հօր պատգամը, իրաքահայեր Աւագ Քա-

հանայի հակիրճ կենսագրությունը հայերենով և անգլերենով՝ իրենց նկարներով հանդերձ, և բարոզ մը իւրաքանչիւր Աւագ Քահանայի կողմէ:

Այս ձեռնարկէն գոյացած հասոյթի գումարը գերեզմանացաւ Առաջնորդարանի կողմէ հաստատուած Հոգեւորականաց Պատրաստութեան Ֆոնդին մէջ: Ան ի գիտութիւն, Արեւմտեան թեմէն ներս ունինք անլի բան հինգ թեկնածուներ, որոնք կրօնական ուսում ստացած են և պատրաստ են Աստուածաբանական և կրօնական իրենց գիտելիքները զարգացնել Հոգեւոր Ընտանիքի և կամ համալսարանի մը մէջ: Այս ֆոնդին գումարը պիտի գործածուի այդ ուսանողներու կրթաթոշակներուն համար:

Արեւմտեան թեմը նոր Ծովսեր կը հաստատուի և անպարակոյս կարիքը ունի նոր հոգեւորականներու:

Վարսի ենք, ձեր նուիրապտութիւններուն շնորհիւ պիտի կարենանք այս ֆոնդը զօրացնել և գումարները յարկացնել նոր հոգեւորականներ պատրաստելու առաքելութեան:

ԻՐԱՔԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԱՍՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ

Լոս Անճելըսի Իրաքահայ Միութիւնը ականապես ըլլալով Արեւմտեան թեմի հոգեւոր վերագործունէի գործունէութիւններուն և աղօթագրքոյններու հրապարակութիւններուն, 2,000 (երկու հազար) փողարի նուիրապտութիւն մը կատարեց Առաջնորդարանին՝ ի նպաստ հայերենով և անգլերենով փայտած «Աղօթագիրք»-ի (Prayer Book) փայագործեան ծախսերուն: Այս աղօթագիրքերը դրկուեցան թեմիս եկեղեցիներուն գրասենեակները և պրամադրելի են Առաջնորդարանէն:

Սուրբ Ծննդեան փօնին օրը, առաջնորդ Սրբազան Հօր ընդունելութեան ընթացքին, յայտարարուեցաւ, թէ Իրաքահայ Միութիւնը, առ ի գնահատութիւն առաջնորդ Սրբազան Հօր նախաձեռնած բազմաթիւ ծրագիրներուն, 5,000 (հինգ հազար) փողար կը նուիրէ Առաջնորդարանին: Նոյնպէս յայտարարուեցաւ, թէ Իրաքահայ Միութիւնը պիտի շարունակէ ամէն փարի Սուրբ Ծննդեան փօնին առթիւ հինգ հազար փողարի նուիրապտութիւն կատարել Առաջնորդարանին:

Թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրութեանի անունով կը գնահատենք Իրաքահայ Միութեան ազնիւ կեցումը և շնորհակալութիւն կը յայտնենք իրենց կատարած նուիրապտութիւններուն համար:

ԴԻՒՄՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ